ԻԳԱԿԱՆ ՍԿԶԲԻ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

ՀՏԴ 2-1
DOI: 10.56246/18294480-2024.17-19

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՊԱՐԳԵՎ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ կրոնագիտության ամբիոնի վարիչ
էլփոստ՝ pargevbarseghyan@ysu.am
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՀԱՐ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ կրոնագիտության ամբիոն
էլփոստ՝ gohar.sargsyan@ysu.am

Հայ կրոնագիտական միտքը կրոնի հոգեբանության բնագավառի ուսումնասիրություններ գրեթե չի կատարել: Կրոնի և դիցաբանության տեսական ուսումնասիրություններում կրոնի հոգեբանության մեթոդաբանական մոտեցումները և ոլորտի դասականների աշխատանքները քիչ են ուսումնասիրված և քիչ են կիրառվում:

Հոդվածի շրջանակներում քննարկվում են իգական նախասկզբի և մայրության պաշտամունքային մոտիվների տարբեր դրսևորումների կրոնագիտական ընկալումները: Հիմնական մեթոդաբանական մոտեցումն այն է, որ անհիշելի ժամանակներում ձևավորված և կրոնադիցաբանական տարբեր համակարգերում հանդես եկող մայր աստվածությունների բազմաբնույթ պաշտամունքն ունի արխետիպային հիմք: Կրոնի հոգեբանության հայտնի հեղինակներից Կարլ Գուստավ Յունգը տալիս է արքետիպի ամբողջական բնութագիրը և բացահայտում դրա կարևոր հատկանիշները: Հին աշխարհի տարբեր դիցարաններից հայտնի աստվածուհիները (Թիամատ, Ինանա, Իշտար, Իսիս, Աթենաս, Արտեմիս, Հեստիա, Անահիտ, Կալի և այն) հանդես են գալիս որպես արքետիպային կերպարներ, և ժամանակակից կնոջ վարքի յուրատեսակ մոդելները ներկայացված են նրանց մասին առասպելներում: Կ. Գ. Յունգը առաջադրել է այն տեսակետը, որ մարդկության պատմության արշալույսին ծագած անգիտակցականն ունի ոչ թե ֆիզիկական, այլ մշակութային բնություն, այսինքն՝ ծագել է կոլեկտիվ հոգեկան փորձի արդյունքում: Նա համոզված է, որ իրականության մեջ մշակութային անգիտակցականը անփոփոխ դրսևորվում է որպես համապարփակ հիշողություն և պահպանվում է հատկապես դիցաբանական կերպարներում ու արքետիպերում: Կ. Գ. Յունգի՝ արքետիպերի հայեցակարգը քննարկվում է թե՛ պատմական, թե՛ ժամանակակից իրողությունների համատեքստում՝ ելակետ ընդունելով ժամանակակից հոգեբանության մեջ յունգյան այն կարևոր ներդրումը,

որ մարդը կյանքի տարբեր իրադրություններում և հատվածներում անցնում է տարբեր արքետիպերի փուլերով և դրանց տարբեր կերպ արձագանքում: Արքետիպերը վարքի սիմվոլիկ սխեմաներ են, նմուշներ, մարդու հոգեկանի խորքային նստվածքներ, որոնք կուտակվել են հազարամյա փորձի ընթացքում՝ անհատի և մարդկային ցեղի գոյաբանական պայքարում:

Բանալի բառեր՝ *արքետիպ, Կ. Գ. Յունգ, մայր աստվածուհի, իգական սկիզբ, վարք, կրոնի հոգեբանություն:*

Իգական նախասկզբի և մայրության պաշտամունքային մոտիվները հարատև գոյություն ունեցող այն երևույթներից են, որոնք ոչ միայն յուրահատուկ ձևով կրկնվում են տարբեր դիցարաններում, այլև հանդես են գալիս արքետիպային կերպարների տեսքով, որոնք, անգիտակցականի կայուն տարրեր լինելով, փոփոխության են ենթարկում իրենց դրսևորման ձևերը:

Արխետիպը մարդկային հոգեկառույցի անբաժան մասն է, դրսևորվում է հոգու բնազդային տվյալներով և նախակերպարներով: Կ. Գ. Յունգն այն ընդհանրացնող կարծիքին է, որ «Հնագույն շրջանից սկսած՝ գործողության պատկերի բնածին առանձնահատկությունը կոչվում է բնազդ, իսկ օբյեկտի հոգեբանական ընկալումը...» արքետիպ[1]: Ընդ որում նա պնդում է, որ արքետիպերը «նախակերպարներ» են և հանդես են գալիս ստեղծագործական ֆանտազիայի տեսքով: Այլ կերպ ասած՝ «Ֆանտազիայի արդյունքում նախնական կերպարները դառնում են տեսանելի, և արքետիպ հասկացությունն իր յուրահատուկ կիրառությունն է գտնում»[2]: Մարդիկ ծնվում են ոչ միայն կենսաբանական ժառանգությամբ, այլև հոգեբանական ժառանգությամբ: Այդ երկուսն էլ մարդկային վարքի, փորձի կարևոր դետերմինանտներ են: Կնոջ արքետիպին առնչվող որակներ են մայրական իշխանությունը, հոգատարությունը, կարեկցանքը, ներողամտությունը, հոգևոր վեհությունը: Բացասական առումով մայրական արքետիպը դրսևորվում է որպես անխուսափելի առեղծված, ինչպես ճակատագիրը: Մայր աստվածուհու դիցաբանական այդ հատկանիշները Կ. Գ. Յունգը բնութագրում է որպես «սիրող և սարսափելի մայր»[3]: Շատ կանայք իրենց ներաշխարհում կգտնեն գծեր, որոնք ներհատուկ են տարբեր աստվածուհիների: Ամեն մի արքետիպային կերպար, առանձին վերցրած, իր մեջ կրում է դրական արարող մոտիվներ և ավերածության դեստրուկտիվ տարրեր: Պետք է ուշադրություն դարձնել կերպարների և պատկերացումների առաջացման գործըն-

---

[1] **Юнг К. Г.,** Психологические типы / **Аналитическая психология и психотерапия**: Хрестоматия, СПб., 2001, с. 191-192.

[2] **Юнг к. Г.,** Душа и миф: Шесть архетипов, Киев, 1996, с. 215.

[3] Տե՛ս **նույն տեղում,** էջ 219:

թացներին, որոնք ի հայտ են գալիս գիտակից «ես»-ի մակերևույթին «հոգու հնագույն նստվածքներից»:

Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումները սերտորեն կապված են տիեզերածնական պատկերացումներին, բնության տարերքների կերպավորմանը: Այս համատեքստում անդրադառնալով կրոնական վաղ հավատալիքների շերտին՝ պետք է առանձնացնել բաբելոնյան Թիամատ մայր-աստվածուհու՝ տիեզերքի կառավարչուհու առասպելը, որի իշխանությանը սպառնում են նրա որդիները, որոնցից էլ Մարդուկ-Բելն իր հզորությունն ապացուցում է խոսքի, մտքի միջոցով[1]: Նա հաղթում է մորը և նրա մարմինը երկու մասին բաժանելով՝ ստեղծում երկինքն ու երկիրը, ինչը նշանակում է, որ Մարդուկ-Բելը, ի տարբերություն իգական նախասկզբի, ձեռք է բերում նոր որակներ՝ բնության ավերման և արարման: Նա դա անում է հզոր մտքի և խոսքի մոգական ուժով, անհետանում է իգական աստվածության գերազանցությունը, և արարչագործությունը սկսվում է մոգական խոսքից, արական նախասկզբի արարումը կրկնվում է, և արդեն կինն է ստեղծվում տղամարդուց[2]:

Զարգացած դիցաբանական համակարգերում Մայր աստվածուհու գլխավոր գործառույթներից է հողի, պտղաբերության, քաղաքների, արհեստների, օջախի, ռազմի և հասարակական կյանքի այլ ոլորտների հովանավորությունը: Այսպես, հունական դիցաբանության մեջ ռազմի դիցուհի Աթենաս Պալասը «տիեզերական մտքով օժտված» լինելու որակներով է հանդես գալիս իր ծննդյան մասին առասպելում, որը բովանդակում է նաև հայրիշխանության դարաշրջանի հեթանոսական դիցաբանությանը բնորոշ գծեր[3]: Նա կարծես թե Զևսի անմիջական շարունակությունն է, նրա մտահաղացումների և գործողությունների ազատատենչ իրականացնողը: Աթենաս Պալասին ներհատուկ է իշխանությունը, կույս աստվածուհի Արտեմիսի և Հեստիայի նման նա անձնավորում է կնոջ անկախությունը: Այն կինը, որը ներքին բավարարվածություն է զգում իր ներփակությամբ, մեծությամբ իր մեջ ակտիվացնում է կույս աստվածուհի Հեստիայի ինտրավերտ արքետիպը: Այսպիսով, եթե կինն իրեն նույնականացնում է կույս աստվածուհուն, նշանակում է նրա կյանքում չկա նշանակալից որևէ մեկը. ուստի կյանքի իմաստն իր մեջ է: Այսպիսին է Արտեմիսի արքետիպը:

Մեր ժամանակների կնոջ վարքի մոդելները ներկայացված են առասպելներում: Դիցաբանական այդ հատկանիշների, արքետիպային կերպարների զուգահեռները կարելի է տեսնել նաև հայկական դիցաբանության մեջ: Անահիտին վերագրվել է հովանավոր դիցուհու գործառույթ, նա համարվել է Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր աստվածուհին, ինչպես Աթենասն է Աթենքինը կամ

---

[1] **Мифы народов мира,** Энциклопедия в 2-х т., т. 2, М., 1992, с. 110.

[2] **Նույն տեղում:**

[3] **Мифы народов мира,** Энциклопедия в 2-х т., т. 1, М., 1991, с. 125-126.

Ինանա-Իշտարը՝ Ուրուկինը[1]: Հայոց դիցարանում Անահիտի պաշտամունքի կողքին նույնանման հատկանիշներով օժտված է եղել ևս մեկ դիցուհի՝ Նանեն: Նրանց դիցապաշտամունքային ընդհանրությունների մասին Ն. Ադոնցը գրում է. «Հայ պանթեոնի մյուս դիցուհին՝ Նանե, նմանապես նույն աստվածության մի այլ դեմքն է: Հիշելու է, որ առասպելի փռյուգիական հեղվածում, որ տալիս է Արնիոբիոսը, Ատիսի մայրը կրում է Նանա անունը: ... Անհավանական չէ, որ նման զրույցի հետևանքով Նանան բազմած լինի Թորդանում՝ իբր ուրույն Աստվածուհի: Նույն կարգի աստված է և Աստղիկը: Տարբերությունը լոկ անվանական է և գուցե նաև տեղական: Աստղիկը Տարոնում նույնն է, ինչ որ Շամիրամը Վանում և Նանեն Բարձր Հայքում»[2]: Սակայն Նանեի պաշտամունքը ներկայացնելիս ուշադրություն պետք է դարձնել մեկ այլ առնչության. այսօր էլ հայերենի մի շարք բառարաններում մորն անվանում են Նանի-Նանե-Նան: Դրանով կարելի է բացատրել նաև այն, որ մոր նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքը և ակնածանքը, սերն ու հարգանքը հայ ժողովրդի հիմնական բնութագրական հատկանիշներից մեկն է: Տարբեր դիցաբանական համակարգերում կարելի է դիտարկել, թե ինչպես են ձևավորվում և զարգանում ընտանեկան դերերն ու միջանձնային շփումները: Արժեհամակարգային սրբությունները, որոնք ներհատուկ են տվյալ մշակույթին, կրոնին, դրանց խուլ արձագանքները և մնացուկները տեսանելի են ժամանակակից ընտանեկան փոխհարաբերություններում և դրանց վարքագծային դրսևորումներում: Ընդ որում արքետիպը դինամիկ է. կյանքի տևողության տարբեր փուլերում կարող է դոմինանտ լինել, փոփոխվել: Փռյուգիական դիցաբանության մեջ Կիբելան երկրի վրա ապրող ամեն ինչի և աստվածների մայրն է, նա կարող է ախտահարել մոլագարությամբ, ինչպես որ մոլագար Ատտիսը փախչում է լեռները և մահանում: Հունական դիցաբանության հնագույն նախնական շերտում Բելլոնան սաբինյան ռազմի աստվածուհի էր՝ Մարսի կինը:

Արևելյան կրոնական աշխարհայացքին բնորոշ էր աշխարհի հանդեպ ընդգրկված, ամբողջական զգացողությունը, միասնականությունը, որը կրում է միաժամանակ խոր անհատական բնույթ: Հնդկական դիցարանում նույնատիպ հովանավոր աստվածուհի է համարվել Շիվայի կինը՝ ռազմի աստվածուհի Կալին: Նա պատկերվում է սև հանդերձներով, պարանոցին կրում խեցիներից պատրաստված զարդեղեն: Կալի աստվածուհին ունի 4 ձեռք, որոնցից երկուսով պահում է տղամարդկանց կտրած գլուխները, իսկ մյուս երկուսով դաշույն և դանակ[3]:

Հեստիան խորասուզված է իր ներաշխարհի մեջ, նրա սիմվոլը օջախն է, սիրային, ռազմական, ինտրիգներին չի մասնակցում, մշտապես եղբոր՝ Զևսի կողքին է, հավատարիմ քույր է: Զևսը լավ զոհի միսը նրան է բաժին անում, նա երդվել է կույս

---

[1] **Նույն տեղում,** էջ 510:

[2] **Նիկողայոս Ադոնց,** Հին հայոց աշխարհայացքը / Երկեր. հատ. Ա., Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 41:

[3] Տե՛ս **Темкин Е.Н**, **Ермах, В. Г.,** Мифы древней Индии, М., 1982, с. 214-218.

մնալ: Հեստիայի արխետիպը կրող աղջիկը ինտրավերտ է, տնային գործերով է զբաղվում, կույսերն ու միանձնուհիները կրում են այս արքետիպային մոդելը: Հերան, Դեմետրան և Պերսեփոնեն, ի տարբերություն կույս այլ դիցուհիների, ներկայացնում են կնոջ-մոր-դստեր ավանդական դերերը, կողմնորոշված են դեպի ամուր կապերը, որի պատճառով էլ խոցելի են, տանջվում են, քանի որ նրանց բռնանում են և առևանգում: Էլևսինյան միստերիան ելնում է նրանից, թե ինչպես Դեմետրան կարողացավ անդրաշխարհից դուրս բերել և հարություն տալ իր աղջկան[1]: Դեմետրան անձնավորում է ոչ միայն երկրագործությունը, տնտեսությունը, այլև հայրենիքը, տունը, ընտանիքի ապահովումը, սնունդն ու ջերմությունը: Նույն բնական զգացումը տարածվում է նաև Պերսեփոնեի վրա, նա մոր շարունակությունն է: Պերսեփոնեն բազմանշանակ դիցաբանական կերպար է՝ միաժամանակ և աղջիկ է, և առևանգված հարսնացու է, մահվան թագավորության տիրուհի: Պերսեփոնեի ճակատագիրը արտացոլում և լուսաբանում է մարդկության կեցության համապատասխան փուլերը: Լինելով մահկանացու էակ՝ մարդը, այնուամենայնիվ, հույս է տածում հավիտենական կյանքի՝ հոգու անմահության հանդեպ, ուստի Պերսեփոնեի առասպելույթը մարմնավորում է առևանգվածի այն հույսը, որ կա վերադարձի հնարավորություն մահից դեպի ծնունդ հավերժ կրկնվող և նորոգվող կյանք, որին տրվում էր աստվածային իրադարձության գաղտնախորհուրդ: Մահվան դառը իրողությունը չէր ըմբռնվում իբրև բացարձակ անգոյություն: Հանդերձյալ աշխարհում փակված Պերսեփոնեն, պատկանելով այդ աշխարհին, մարմնավորում է միաժամանակ և՛ մահը, և՛ կյանքը: Երբ նա վերադառնում է երկիր՝ մոր մոտ, երկիր է վերադառնում նաև գարունը, և մահվան տիրուհին դառնում է վերածնության նոր կյանքի աստվածուհի:

Հին Եգիպտոսում մայրական սիրո արքետիպը Իսիսն է, որը՝ որպես հավերժական կնոջ կերպար, կոնկրետ չէ, այլ արքետիպ է, որն իբրև դիցաբանական և հոգեբանական կերպար խտացնում է բոլոր կին նախնիների կենսափորձը, մի յուրատեսակ շտեմարան, որը վառ արտահայտված է նրա և որդու՝ Հորոսի փոխհարաբերության մեջ: Նա նվիրված և հոգատար մայր է, մշտապես ու ամեն ինչում օգնում է զավակին: Իսիսի պաշտամունքը սերտորեն կապված էր իր եղբոր և ամուսնու՝ մեռնող և հառնող բուսականությունը անձնավորող Օսիրիսի պաշտամունքին: Նա առաջին հերթին համարվել է բարոյական բարձր նկարագիր ունեցող աստվածուհի, որը հույս, մխիթարանք և փրկության երաշխիք է տվել հուսահատվածներին: Նրան պատկերում էին նստած՝ գլխին կովի եղջյուրներով թագ, կենտրոնում՝ արեգակի սկավառակը: Հաճախ Իսիսը պատկերվել է նաև իր որդուն՝ մանուկ Հորոսին գրկած[2]:

---

[1] **Мифы народов мира,** Т. 1, с. 365.

[2] **Մանրամասները տե՛ս** Դիցաբանական բառարան, **Երևան, 1985, էջ 103,** Всеобщая история религий мира, **Иллюстрированная энциклопедия, 2006, с. 70.**

Հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց՝ հին արխաիկ աստվածուհիները հովանավորում են հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի տարբեր կողմերը: Միջերկրածովյան տարածաշրջանում մարդկային տառապանքները կապվել և նմանվել են աստվածության տանջանքին: Այսպիսի բազմագործառնական հատկանիշներով է օժտված շումերական աստվածուհի Ինանան՝ Ուրուկի հովանավորը, Դումուզիի՝ ողբերգական ճակատագիր ունեցող հովվի, սիրեցյալը[1]: Այս դիցուհիներն անձնավորել են նաև բնության շրջափուլերը և վերածնունդը: Աստվածությունները, որպես կանոն, ձեռք են բերում մեռնող և հարություն առնող աստծո (Իսիս-Օսիրիս, Կիբելա-Ատտիս, Իշտար-Ինանա-Թամմուզ և այլն) հատկանիշներ, և այդ ոգով սկիզբ է դրվել հուղարկավորության և սգո ծեսերին:

Ըստ Կ. Գ. Յունգի՝ նման պաշտամունքները համապատասխանել են որևէ կարգի, արքետիպի, վիշտը վերածվել է հոգևոր բովանդակության, կյանքի փորձի, արժեքների, որոնք մահվան միջոցով տանում են դեպի հարության: Աստվածուհիները հովանավորել են նաև հայրենիքը, տոհմի անվտանգությունը, ընտանեկան օջախը: Հռոմեական դիցաբանության մեջ օջախի հովանավոր աստվածուհի Վեստան նաև քաղաքացիական համայնքի կարգ ու կանոնի հովանավոր աստվածուհին էր[2]:

Մոգության գործառույթը ևս ներհատուկ է աստվածուհիներին, ինչպես հունական դիցաբանության մեջ Հեկատեն է, որը թուրմ է պատրաստում և կախարդանքի համար օգնում Մեդեային: Մեդեան պարադոքսալ մոր կերպար է: Յասոնի սիրուն հասնելու համար նա կապում է երկրային և երկնային աշխարհները[3]: Նա Դեմետրայի և Պերսեփոնեի հետ եռամիության մի փոքրիկ խումբ է՝ Մայր-աղջիկ-լուսին-Հեկատե, որոնց ատրիբուտը ջահն է: Հեկատեին կարելի է համարել վայրի բնության աշխարհը մարմնավորող Սելենայի, Արտեմիսի գիշերային հիպոտասը: Հայկական դիցարանում կախարդ աստվածուհիներ են գիշերամայրերը, որոնք օձերը ձեռքներին հետապնդել են արևին, բայց չեն կարողացել բռնել[4]:

Իգական սկզբի պաշտամունքի բնութագրական հաջորդ որակը կապված է մեկ այլ գործառույթի՝ ջրի և խոնավության հետ: Հայկական դիցարանում ջրի և խոնավության, սիրո և գեղեցկության աստվածուհի է համարվել Աստղիկը, որի հունական համարժեքը Ափրոդիտեն է: Այս առումով, երբ անդրադարձ է կատարվում ընտանեկան կյանքի փոխհարաբերություններում տեղ գտած արքետիպային մոդելների ձևափոխության ենթարկված դրսևորումներին, անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել և նմանություններ բացահայտել տարբեր դիցարանների դիցաբանական կերպարների միջև. մարդկային փոխհարաբերությունների դաշտը

---

[1] **Мифы народов мира,** т. 1, с. 510.

[2] **Նույն տեղում,** էջ 234:

[3] **Мифы народов мира,** т. 2, с. 150-151.

[4] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 95-98:

գրեթե նույնությամբ կրկնում է մարդու բնավորությունը, նրա կրքերն ու տագնապները, հոգեկան անհանգստությունները:

Կ. Գ. Յունգը առաջադրել է հակաֆրոյդյան այն տեսակետը, որ մարդկության պատմության արշալույսին ծագած անգիտակցականն ունի ոչ թե ֆիզիկական, այլ մշակութային բնություն, այսինքն՝ ծագել է կոլեկտիվ հոգեկան փորձի արդյունքում: Մյուս կողմից՝ նա գալիս է այն հետևության, որ իրականության մեջ մշակութային անգիտակցականը անփոփոխ դրսևորվում է որպես համապարփակ հիշողություն և պահպանվում է հատկապես դիցաբանական կերպարներում ու արքետիպերում[1]: Կ. Գ. Յունգի հայեցակարգում շրջանառության դրված «արքետիպ-հունական նախակերպար» եզրով բնորոշվում է նախասկզբնական այն սխեման, որը դրսևորվում է չգիտակցված, ապրիորի և ակտիվացնում է երևակայությունը: Լինելով «անգիտակցական պատկերացում»՝ արքետիպը բովանդակությամբ չի սահմանվում, այլ բնորոշվում է միայն ձևական առումով: Ընդ որում բովանդակային առումով բնորոշում է միայն նախատիպը, և դա էլ այն պարագայում միայն, երբ գիտակցվում է և «լցվում գիտակցականի փորձով». «Արքետիպը ինքնին դատարկ ձևական տարր է..., պատկերացումների այս կամ այն ձևի ապրիորի տրված հնարավորություն»[2]: Այդ պատճառով ժառանգվում են ոչ թե պատկերացումները, այլ ձևը, որը նույնպես հնարավոր է սահմանել միայն ձևական առումով: Ճիշտ այդպես էլ անհնար է բացահայտել ինքնին արքետիպը, ինչպես որ անհնար է բացահայտել բնազդների առկայությունը, քանի դեռ դրանք կոնկրետ դրսևորում չեն ստանում: Ուստի, ըստ Կ. Գ. Յունգի, ընդհանրապես չի կարելի տուրք տալ նաև այն պատրանքին, թե արքետիպը կարելի է բացատրել միանգամից: Նույնիսկ ամենակատարյալ բացատրությունն անգամ այլ բան չէ, քան «պատկերավոր այլ լեզվով կատարած շատ թե քիչ հաջողված թարգմանություն»[3]:

Կ. Գ. Յունգը պնդում է, որ կրոնական պատկերացումների մեկնաբանության գործում անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել ոչ միայն համապատասխան գաղափարների առկայությունը, այլև դրանց ինտենսիվության աստիճանը, քանի որ «ինչպես ցանկացած բնազդ, կրոնական պատկերացումների արքետիպն էլ ունի իր առանձնահատուկ էներգիան, որը նա չի կորցնում, եթե անգամ արհամարհված է գիտակցության կողմից»[4]: Այն պատկերացումը, որ յուրաքանչյուր անհատ տիրապետում է մարդկային միջինացված գործառույթների և որակների, կարելի է միանգամայն հավանական համարել, բայց այդ պարագայում ինչու չսպասել կրոնական նորմալ գործոնների կամ արքետիպերի առկայության ի հայտ գալուն,

---

[1] **Юнг К. Г.**, Ответ Иову, М. 1995, с. 110.

[2] **Юнг К. Г.,** Архетип и символ / **Аналитическая психология и психотерапия**, с. 314-15.

[3] **Նույն տեղում,** էջ 315:

[4] **Նույն տեղում:**

քանի որ այդ սպասումը, ինչպես հեշտ է նկատել, պատրանքային չէ»[1]: Ըստ հոգեբանի՝ այդ խնդիրը կարելի է հետևողականորեն լուծել այն դեպքում միայն, երբ արքետիպի էությունը մեկնաբանվում է նախնադարյան մարդու սուբյեկտիվ պատկերացումների հետ ունեցած կապի մեջ. «Նախնադարյան մարդու սուբյեկտիվությունն այնքան զարմանալի է, որ ամենաառաջին ենթադրությունը պետք է լինի նրա հոգևոր կյանքից առասպելների արտաբերումը: Ըստ էության, նրա համար բնության ճանաչողությունը հանգում է լեզվի և անգիտակցականի հոգևոր գործընթացների արտաքին դրսևորումների: Նրանց անգիտակցականը դառնում է այն բանի պատճառ, որ առասպելների բացատրության ժամանակ ասես դիմում էին ամեն ինչի, բայց միայն ոչ հոգուն: Գիտակցությանն անհասանելի էր այն, որ հոգին բովանդակում է այն պատկերները, որոնցից սկիզբ են առնում առասպելները, որ անգիտակցականը գործունյա է և գործունեության ենթակա սուբյեկտ, որի դրաման նախնադարյան մարդու համանմանությամբ բացահայտում է բնության մեծ ու փոքր գործընթացներում»[2]: Այլ կերպ ասած՝ ըստ Կ. Գ. Յունգի հայեցակարգի՝ արխետիպը արտաբերվում է բազմաթիվ անգամ կրկնվող դիտարկումներից: Ընդ որում, այն որոշվում է ոչ թե բովանդակային, այլև ձևական առումով, ինչը բացատրվում է հետևյալ կերպ. «Թուլությունն ու անօգնականությունը մարդկության հավիտենական ապրումներն են և հավիտենական հարցերը, դրա համար էլ բովանդակում են դրանց հավիտենակից պատասխանը, հակառակ պարագայում մարդը վաղուց կվերանար աշխարհից: Երբ արդեն կատարված է այն ամենը, ինչ հնարավոր էր, մնում է դրանից վեր ինչ-որ բան, որը կարելի է կատարել, եթե լիներ համապատասխան գիտելիք: Բայց արդյո՞ք մարդը շատ բան գիտի ինքն իր մասին: Դատելով նրա ունեցած փորձից՝ բավականին քիչ: Անգիտակցականի համար բավականին ընդարձակ տարածություն է մնում: Այդ նպատակին էին ծառայում «representations collectives» ծիսակարգերը, դոգմաները. դրանք անգիտակցականի, այդ «perils of the soul»-ի վտանգի դեմ կանգնեցված պատնեշներ և սյունակոթողներ էին: Իզուր չէ, որ նախնադարյան ծիսակարգը ներառում էր ոգիներին դուրս քշելու արարողությունը, կախարդանքից ազատագրումը, ոչ բարի նախանշանների կանխարգելումը, քավությունը, մաքրագործումը և դրանց համանման այլ գործողություններ, այսինքն՝ մոգական գործողություններ»[3]:

---

[1] **Նույն տեղում**, էջ 320:

[2] **Նույն տեղում**, էջ 268:

[3] **Նույն տեղում,** էջ 283: Այդ տեսակետը լիովին մատչելի ներկայացնելու միտումով հոգեբանը նաև հավելում է, որ «Անգիտակցականի ալիքը հեշտությամբ կարող է նրան կլանել, և այդժամ նա մոռանում է իր մասին և կատարում է բաներ, որոնց մեջ նա ինքն իրեն չի ճանաչում: Վայրենիները դրա համար վախենում են անսանձ էֆեկտներից՝ այդ դեպքում գիտակցությունը հեշտությամբ իր տեղը զիջում է մոլագարությանը: Մարդկության բոլոր ձգտումները ուղղորդվել են դեպի գիտակցականի ամրապնդումը», **նույն տեղում,** էջ 284:

Արքետիպը կերպարների սխեմա է, դրանց հոգեբանական նախադրյալը, հնարավորությունը: Այն բովանդակային տեսք է ստանում միայն այն ժամանակ, երբ ներթափանցում է գիտակցության մեջ, լցվում գիտակցական փորձի նյութով: Հոգեբանության մեջ Կ. Գ. Յունգը արքետիպի հարաբերական համարժեք է համարում հոգի-անիմուսը, չինական ին-յանը, Իմաստուն Ծերունին, դիցապաշտական մոր բազմազան տարբերակները (աստվածուհի, կախարդ, մոյրա, Դեմետրա Կիգեմա, Աստվածամայր և այլն), որը տանում է բարձրագույն կանացի էության արքետիպի վերահանմանը, ինչը մարմնավորվում է սերունդների հերթափոխման հոգեբանական զգացողությունը, անմահության և ժամանակի իշխանության հաղթահարումը: Հետևելով յունգյան վերլուծական մտքի ընթացքին՝ կարող ենք փաստել, որ արքետիպերը վարքի սիմվոլիկ սխեմաներ են, նմուշներ, մարդու հոգեկանի խորքային նստվածքներ, որոնք կուտակվել են հազարամյա փորձի ընթացքում՝ անհատի և մարդկային ցեղի գոյաբանական պայքարում:

Քննարկվող համատեքստում Կ. Յունգը անառկելի է համարում այն, որ

- կոլեկտիվ անգիտակցական հասկացությունը մարդկության անցյալի հիշողության փակ հետքերի համամարդկային փորձ է, որը բնորոշ է ժողովուրդներին, ռասսաներին,
- կոլեկտիվ անգիտակցականը շտեմարան է, որում կուտակված են արքետիպերը:

Զբաղվելով սեփական գիտական որոնումներով՝ Կ. Գ. Յունգը եկավ նաև այն եզրահանգման, որ անգիտակցականում կան պատրաստի բարդույթներ անհատի անցյալից՝ ծնողական, մանկական, ընտանեկան, ինչպես նաև իշխանության անլիարժեքության: Դեռևս Զ. Ֆրոյդի մոտ կար գաղափար մարդկային հոգեկանի ժառանգված սխեմաների գոյության մասին, որոնց ազդեցությամբ մարդկության կենսափորձը դրվում է որոշակի կարգի մեջ: Նա դրանք համարում էր մարդկության քաղաքակրթության պատմության հնագույն նստվածքները: Կ. Գ. Յունգի մոտ արքետիպը հենվում է կերպար, նախակերպար, պլատոնյան իդեա հասկացությունների վրա: Պլատոնի մոտ իդեան զգայական աշխարհի իրերի էությունն է, պատճառն ու նախակերպարը, իսկ Ի. Կանտի մոտ՝ տրանսցենդենտ էություն է:

Զ. Ֆրոյդը, նկարագրելով էդիպյան բարդույթը, հայտնաբերեց կապ հունական դիցաբանության և մարդկության հոգեբանության միջև: Նրա հայեցակարգը հիմնված էր այն ենթադրության վրա, որ արքետիպը սխեմա է, հակում, նախատրամադրվածություն, որը ներազդում է բնավորության փոփոխությունների վրա:

Արխետիպերի ներաշխարհի լուսաբանման միտումով Կ. Գ. Յունգը պնդում է, որ

- արքետիպերն իրենց արտացոլումն են գտնում հին հունական աստվածների մեջ, որոնք իրենց խառնվածքով, պահանջմունքներով ձևավորում են այն, ինչը համապարփակ է այդ արխետիպին,

- իբրև արքետիպեր՝ աստվածները գոյություն ունեն նմանվելու համար և կրում են որոշակի հոգեբանական պրոբլեմներ,
- արքետիպը, լինելով համամարդկային ժառանգության մի մաս, արտացոլում է մարդկության կենսափորձը, ակտիվացնում կերպարների մեջ ունիվերսալ զգացումներ,
- արքետիպային կերպարները տիպական ընդհանրացումներ են: Առողջ հոգեբանական զարգացման և աճի համար նոր մոտեցման լույսի ներքո են կարևորվում կենսական նպատակները, կյանքի ոճը, որը մարդը մշակում է և օգտագործում իբրև կողմնորոշում,
- բոլոր արքետիպերը վարքի հնարավոր մոդելներ են, որոնք առկա են տղամարդու և կնոջ հոգեբանության մեջ, ուստի նաև արքետիպային սիմվոլները հոգեկանի վրա ներգործության տարբեր դրսևորումներ ունեն:

Կ. Գ. Յունգի կարևոր ներդրումը ժամանակակից հոգեբանության մեջ այն ապացույցն է, որ մարդը կյանքի տարբեր իրադրություններում և հատվածներում անցնում է տարբեր արքետիպերի փուլերով, դրանց տարբեր կերպ արձագանքում: Դրանցում, իբրև վարքագծային ռազմավարություն, մեզանից յուրաքանչյուրի մեջ դոմինանտ է այս կամ այն աստվածության ազդեցությունը: Արքետիպը պատմական է, բայց անցյալ չէ, քանի որ նրան կարելի է հանդիպել նաև ժամանակակից մարդու պատրանքներում և երազներում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 95-98:
2. Դիցաբանական բառարան, Երևան, 1985:
3. Նիկողայոս Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, Երկեր, հատ. Ա., Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006:
4. Всеобщая история религий мира, Иллюстрированная энциклопедия, 2006.
5. Мифы народов мира, Энциклопедия в 2-х т., т. 1, М., 1991, т. 2, М., 1992.
6. Темкин Е. Н, Ермах, В. Г., Мифы древней Индии, М., 1982.
7. Юнг К. Г., Архетип и символ // Аналитическая психология и психотерапия, Хрестоматия, СПб., 2001.
8. Юнг К. Г., Душа и миф: Шесть архетипов, Киев, 1996.
9. Юнг К. Г., Ответ Иову, М. 1995,

10.Юнг К. Г., Психологические типы // Аналитическая психология и психотерапия: Хрестоматия, СПб., 2001.

ANALYTICAL EVALUATION OF FEMALE ARCHETYPICAL CHARACTERS

BARSEGHYAN PARGEV
PhD in Philosophy, Associate Professor,
Head of the Department of Religious Studies,
Yerevan State University,
e-mail: pargevbarseghyan@ysu.am
SARGSYAN GOHAR
PhD in in Philosophy, Associate Professor,
Department of Religious Studies,
Yerevan State University,
e-mail: gohar.sargsyan @ysu.am

Armenian religious studies have so far conducted only limited research on the psychology of religion. In the theoretical studies of religion and mythology, methodological approaches to the psychology of religion and the works of the main scholars from the field are rarely researched and applied.

The article discusses the religious interpretations of various manifestations of female primordial and maternal worship motifs. The main methodological approach is that the diverse worship of mother deities, which emerged in prehistoric times and appeared in various religious-mythological systems, has an archetypal basis. One of the well-known experts in psychology of religion, Carl Gustav Jung, provides a comprehensive characterization of an archetype and reveals its important features. The goddesses known from various mythologies of the ancient world (such as Tiamat, Inanna, Ishtar, Isis, Athena, Artemis, Hestia, Anahita, Kali, etc.) appear as archetypal figures, and the myths about them present unique models of women's behaviour of the time. C. G. Jung proposed the idea that the unconscious, which emerged at the beginning of human history, has a cultural rather than physical nature, meaning it originated from the collective psychic experiences. Therefore, he believed that the cultural unconsciousness manifests itself in reality as a comprehensive memory without variation and remains preserved especially in mythological figures and archetypes. The concept of archetypes by C. G. Jung is discussed here in the context of both historical and contemporary realities, taking as a starting point the significant contribution of Jungian psychology, according to which individuals go through different archetypal phases in various life periods and situations, and respond to them in different ways. Archetypes are symbolic schemas of behaviour. They are those

samples and deep sedimentations of human psyche which have accumulated over millennias of experiences during human's individual and tribal existential struggle.

Keywords: *Archetype, C. G. Jung, Mother Goddess, Female Figures, Behaviour, Psychology of Religion.*

АРХЕТИПНЫЕ ОБРАЗЫ ЖЕНСКОГО НАЧАЛА

БАРСЕГЯН ПАРГЕВ
Кандидат философских наук, доцент
Заведующий кафедрой религиоведения ЕГУ
электронная почта: pargevbarseghyan@ysu.am
САРГСЯН ГОАР
Кандидат философских наук, доцент
Кафедра религиоведения ЕГУ
электронная почта: gohar.sargsyan@ysu.am

Армянская религиозная мысль имеет крайне скудный опыт в области изучения психологии религии. А в теоретических исследованиях религии и мифологии методологические подходы психологии религии и труды классиков в этой области мало изучены и редко применяются.

В статье обсуждаются религиоведческие представления о различных проявлениях женского начала и мотива культа материнства. Существенной методологической парадигмой выступает архетипная основа комплексного культа Богини-матери, сформировавшейся в незапамятные времена и проявляющейся в разнообразных религиозно-мифологических системах.

В своих трудах о психологии религии Карл Густав Юнг дает полную характеристику архетипа и выделяет его принципиальные особенности. В качестве архетипных фигур выступают знаменитые богини пантеонов древнего мира (Тиамат, Инана, Иштар, Исида, Афина, Артемида, Гестия, Анаит, Кали и др.), а в мифах о них представляются конкретные модели современного женского поведения. С точки зрения Юнга, бессознательное, возникшее на заре человеческой истории, определяется не природным, но культурным порядком, то есть рождается в результате коллективного психического опыта. Он убежден, что в действительности культурное бессознательное неизменно проявляется как всеобъемлющая память и сохраняется преимущественно в мифологических образах и архетипах. Концепция архетипов К. Г. Юнга рассматривается в контексте как исторических, так и современных реалий. Исходным же положением послужило крайне значимое для современной психологии учение Юнга о том, что человек в разных ситуациях и сферах

жизни проходит несколько архетипических стадий и по-разному реагирует на них. Архетипы — это символические схемы поведения, закономерности, глубокие отложения человеческой психики, накопленные в течение тысячелетнего опыта онтологической борьбы личности и человеческого рода.

Ключевые слова: *архетип, К. Г. Юнг, богиня-мать, женское начало, поведение, психология религии.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 06.09.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.09.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: